

# ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԿԻ ՎԵՐՋԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
d.hovhannisyan@president.am

Հին հայերենի հոլովական վերջառորութիւնների ծագման հարցին անդրադարձել են պատմահամեմատական հայերենազիտութեան զրեթ բոլոր նշանաւոր ներկայացուցիչները: Առանձին հարցեր քննութեան նիւթ են դարձել համեմատարանական ամփոփիչ բնոյթի աշխատութիւններում, ինչպիսիք են, օրինակ, Կ. Բրուգմանի *Grundriß der Vergleichenden Grammatik der Indogermanischen Sprachen* (1916) (Անդրեմանական լեզուների համեմատական թերականութեան հիմունքները) և Անոնան Մէջէի *Introduction à l'Etude Comparative des Langues Indo-européennes* (1934)<sup>1</sup> (Նույերոպական լեզուների համեմատական ուսումնախրութեան ներածութիւն): Հիմանահարցին առկաուղ բոլոր տեսակւներն ի մի են թերուել Գեորգ Զահուկեանի Հին Հայերենի Հոլովական Այսուէմը Եւ Նրա Ծագումը (1959) և *Sravnitel'naya Grammatika Armianskogo Yazika* (1982) (Հայոց լեզուի համեմատական թերականութիւն) արժեքաւոր աշխատութիւններում: Սակայն դրանով հանդերձ ին հայերենի հոլովական ձեւերի առաջացման խնդիրը չի կարելի վերջնականապես լուծուած համարել: Դրանցից թերեւս, առանձնակի խնդիրներ չեն յարուցել միայն յոգնակի հայցականի -*-ս* և եզակի գործիականի -*-բ(b)*, -*-ա(w)*, -*-ւ(v)* վերջառորութիւնները, որոնցից առաջինի նախաձեւ է համարում հնդ-\**-ns* ինչ երկրորդի \*-*bh*ն, ինչ, օրինակ, եզակի բացառական և յոգնակի սեռական, տրական ու բացառական հոլովների վերջառորութիւնների ծագման հարցը լուրջ տարակարձութիւնների տեղիք է տուել: Տարակարձութիւնների տեղիք է տուել նաև յոգնակի անուանականի -*-բ(k)* վերջառորութեան ծագման հարցը<sup>2</sup>, հետեւաբար մասնակիօրէն խնդրայարոյց է նաև յզն. գործիականի կազմութեան հարցը, որքանով, իբրև կանոն, յզն. գործիականի հաւասար է «Եզ. գրձ.+ր» (հմմտ. բանիք, ձեռամբք, դատերք, գործուք, ծովուք եւն.): Այս սկզբունքը խախտում է միայն առանձին դէպքերում, երբ գործիականն ունի զուգաձեւութիւն (հմմտ. փորու/-մբ-ը, աղբերք/-աւ-ը): Ուստի միանկամայն տեղին է հնչում Մէջէի դիտողութիւնը, որ հայերենում «յոգնակի հոլովական վերջառորութիւնները բաւական մթին են»:

Հայերին Հիւրշմանը 1883ին հրատարակուած իր *Հայազիտական Ուսումնասիրութիւնների* յանելուածում ենթադրութիւններ է արել հայերենի հոլովական որոշ թերոյթների, այդ թուով՝ եզակի բացառականի ծագման վերաբերեալ: Ըստ այդմ՝ բացառականի «Է-ն պէտք է որ \*ey-ից

սերուելիս լինի եւ պետք է մեկնաբանի մի հեղեկը. *e-toe* (հմմտ. սևս. *yatas*, *tatas*, *sarvatas*, *agratas*, զենդ. *xwatoš*, *aiwito* եւ այլեր) ձեւով<sup>4</sup>:

Հոլգէր Պեղերսը «նուազ հաւանական» է համարել Հիրշմանի տեսակետը: Նրա կարծիքով յետաղսա մասնիկը ոչ թէ պարզապես աւելացել է տարբեր արմատների վրայ, «այլ իրմէ յառաջ -է- տառ մղնդունած է, որ միայն ո- արմատներու մէջ կրնայ մնկնուիլ»<sup>5</sup>: Թէեւ Հիրշմանը -ո հիմքով գոյականների -ոյ վերջաւորութիւնը բխեցնում է \*-օտօտից, այլ ոչ թէ: \*-օսօից, սակայն դա ես խնդիրը չի լուծում, դրովիետն, ըստ Պեղերսնի, եթէ այդ «ենթադրութիւնը... նպաստառը» է ի սրտէ, ի զարդուէ (զարդէ), ի սերմանէ, ի դասերէ ձեւերի համար, ապա չի բացաւորում բացառականի այնպիսի դերանուանական տարբերակներ, ինչպիսիք են յորմէ (որ), յումերէ (որ), ի նմանէ (նա) «կրանից», յայնմանէ (այն, սեռ, այեր, տր. այն), ի նոցանէ «կրանցից» (նա) և յատկապէս՝ ի մէջ «մեզնից/մեզանից» (մեր), ի ձեզ «ձեզնից/ձեզանից» (դուք): Նրա կարծիքով յատուկ ուշադրութեան արժանի է ...ոց վերջաւոր սեռականի վրայէն բացառականի կազմութիւնը, որ տեսնուած բան չէ<sup>6</sup>: Բացառականի վերջաւորութեան անուանական և դերանուանական ձեւերի համար ընդհանուր նախաձեւի վերականգնումը, ըստ ամենայնի, դժուարութիւն է ներկայացնում մի կողմից՝ ի տեղուցէ, ի տարւոցէ, ի գեղոցէ, ի կենցէ, իսկ միւս կողմից՝ ի մէջ, ի ձեզ տիպի ձեւերի ոչ-միօրինակ կազմութեան պատճառով: Նշուած ձեւերի հիման վրայ նա եղբակացնում է, որ բացառականի -է վերջաւորութիւնը նախապէս ինքնուրոյն քան էր, «որ իէ խնդրառուած տրականի վրա կցուերով՝ ներգոյականի իմաստը կը փոխէ բացառականի<sup>7</sup>: Պեղերսը ուղիղ կապ է տեսնում գրաբարի տրականի, ներգոյականի և բացառականի միջեւ:

Պեղերսն տեսութեան մէջ բաց են մնամ հետեւեալ հարցերի պատասխանները. 1) բառային արծերով Ան հայերէնը ժառանգել է նախահնդեւրոպական լեզուից, փոխանել է մեկ այլ լեզուից, թէ՝ զարգացրել է ինքնուրոյն պատմութեան ընթացքում, 2) եթէ Ան ունի հնդ. ծագում եւ նրա նախաձեւը \*-ետօր կամ \*-օսօն չէ, այդ դեպքում ո՞ն է:

Մէկն, ընդհակառակը, ունի նոյն տեսակետը, ինչ և Հիրշմանը: Որպէս լրացրոցիշ փաստարկներ նա նշում է հետեւաները. ա) հնարաւոր չէ որեւէ համապատասխանութիւն հաստատել հնդ. բացառականի և հայերէի բացառականի միջեւ, որովհետեւ հնդ. բացառականը յատուկ վերջաւորութիւն ունէր միայն \*-օ(-ո) հիմքով բառերի դէպրում՝ \*-ծ՛ (հմմտ. սևսկ. *v̄ka á*, լատ. *lurð(d)*, լիտ. *vilko*), իսկ գրաբարում, ընդհակառակը, \*-ո(-ո) հիմքով բառերի բացառականը ձեւով չի տարբերում սեռական-տրականից, բ) հնդ. լեզուարևտանիրում հայերէնը ամենից մօտ է «յունարէնի տիպին մօտիկ կանգնած տիպին». թէպէս պատմական շրջանում յունարէնը չունի ոչ ներգոյականի եւ ոչ էլ բացառականի

ձեւեր, բայց Հոմերոսի մօս, որի ստեղծագործութիւնները յունարէնի ամենից հին վկայութիւններս են, հանդիպում են օնրանուն «Երկնքում» և օնրանուն «Երկնքից» ձեւերը, ուր -*Թէ* արտայայտում է ներգոյականի, իսկ - Թէ բայց բացառականի իմաստ, զ) *տեղուց, գեղոց, կենց, մէնց, մէնց* եւ նման ձեւերում առկայ չի նախաձեւը, բայտ կրա, *միցն* է, այլ ոչ թէ \**ց՛հն*, ինչպէս կարծում է Պեղերսընը: «Երկնքում» և

Եզակի բացառականի-է թերոյիթ ծագման հարցում Աճառեանն ու Զահուկեանը, բայտ եռթեան, համամիտ են Հիւրշմանի և Մէջի հետ<sup>9</sup>:

Իհարկէ, յատկապէս պատմահամեմատական լեզուարանութեան մէջ նորութիւն չէր այն միտոք, որ թերականական մասնիկները նախապէս եղել են ինքնուրոյն բառեր: Ժամանակի ընթացքում, զրկուելով բառային շեշտից, կորցրել են բառային ինքնուրոյնութիւնը և վերածուել մասնիկների, որն էլ համապատասխան բառին կցուելով պատճառ է դարձել: Այդպիսի բառային միաւորներ կան նաև ժամանակակից լեզուներում, այդ բայց՝ հայերէնում: Այդպիսիք են բոլոր կարգի առդրութիւնները (նախորդիները, նախադրութիւններն ու ետադրութիւնները), որոնք խօսրում ինքնուրոյն գործածութիւն չունեն (հմմտ. *g, h, an, ընդ* գրաբարում, *մասին, վրայ, հետ, դէպի* արդի հայերէնում, *from* (համարժեք է *հ. բցո.-ի վերջաւորութեանը, ու. ու, ու, ս նախորդներին*), *on «վրայ», to «մէջ, դէպի», in «մէջ»* անզերէնում, ձ «դէպի», *sur «վրայ, մասին», en* (հմմտ. ու էտ «ամուսնը»), *chez «մօս»* ֆրանսերէնում, *наад* «վրայ», *к «դէպի, մօս»*, *без «առանց»*, *у «մօս»* ռուսերէնում եւն.): Օրինակ՝ գրաբարեան *առ* եւ *ի նախորդները* արդի հայերէնում առաւելապէս ունեն նախածանցային կիրառութիւն (հմմտ. *առհասարակ, առյաւետ, իհարկէ, իզուր*), թէպէս առանձին դէպերում պահպանել են նաև իրենց նախորային բնոյր (հմմտ. *ի գիտութիւն, առ այսօր*): Թէ՛ իբրև նախորդ եւ թէ իբրև նախածանց այդ բաղադրիչներն այժմ գուրկ են բառային շեշտից:

Այդ հարցերին պատասխանելու համար, կարծում ենք, գրաբարեան բացառականի վերջաւորութիւնների (ինչպէս Եզակի, այնպէս էլ յոզեակի բուերի) հարցը ախոհ քննել ոչ թէ առանձնաբար, այլ հնդերոպահան ցեղակիցների հորովական համակարգերի հետ համայիր առնչութիւնների տիրոյթում, մասնաւրապէս տիպարանական գուգահեռների համատերսուում: Այդ տեսանկիւնից ուշագրաւ են հետեւել իրողութիւնները:-

ա) Արեւմտեան (կենտում) խմբի լեզուների հոլովական համակարգերը հնդերոպահանի համեմատութեամբ ենթարկուել են զգայի փոփոխութիւնների: Այսպէս, նախահնդերոպահական լեզուի ուր հոլովներից (անուանական, կոչական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական) հին յունարէնը պահպանել է միայն

հինգը՝ անուանականը, կրչականը, հայցականը, սեռականը եւ տրականը: Սեռականն իր վրայ է վերցրել նաև բացառականի, իսկ տրականը՝ նաև միջոցականի (օրդինանի, իմա՝ միջոցական գործիական) եւ ներգոյականի գործառոյթները. այդ հոլովների իմաստները ճշգրտում են նախողիների միջոցով<sup>10</sup>: - Լատիներենում պահպանուել է «Վեց կենդանի հոլով»՝ նշուածներին աւելացնելով արլատիր (ablativus). այս հոլովը լատիներենում բազմիմասն է, բայց հիմնականում համընկնում է այլ լեզուների գործիականին, ի տարբերութիւն, օրինակ, հնդ ևախալեզուի կամ սանսկրինի, որը արլատին ունի բացառական հոլովի իմաստ: Լատիներենում պահպանուել են նաև ներգոյականի հետքերը, իսկ ընդհանրապէս այն անհետացել է<sup>11</sup>: Վեց հոլով է պահպանուել նաև խեթերէնը՝ անուանական, հայցական, սեռական, տրական (-ներգոյական), բացառական, գործիական: Հին խեթերէնում տրականն ու ներգոյականը տարբերակուել են որպէս ինքնուրոյն հոլովներ, հետեւաբար հոլովների թիւը եղել է եօթ: Լուլիկերէնում ձեւով չեն տարբերուել բացառականը (ablativus) եւ գործիականը (instrumentalis), հետեւաբար հոլովների թիւը նուազել է եւս մէկով<sup>12</sup>: Գորերէնը պահպանուել է չորս հոլովական ձեւ՝ անուանականի, սեռականի, տրականի եւ հայցականի. «Կոչական հոլովը պահպանուել է միայն եզակի թում՝ հոլովման որոշակի տիպերում»<sup>13</sup>: Կելտական լեզուներում նոյնպէս հնդ. հոլովման համակարգը ենթակուել է պարզեցման. մասնաւրապէս՝ «գործիականն ու ներգոյականը համընկել են տրականի հետ եւ արդիւրում ստացուած հոլովն ստացել է տրական անուանումը», իսկ բրետական լեզուներում առհասարակ հոլովական վերջաւորութիւններն անհետացել են<sup>14</sup>: Այսպիսով, արեւմտեան լեզուախմբի 5 տարբեր լեզուածիդեր ներկայացնող 6 լեզուներից եւ ոչ մէկը չի պահպանուել հետեւուպական հոլովական դրուածը, իսկ յունարէնն ու գորերէնը պահպանուել են գրեթէ կիսով շափ:

բ) Դատկերն առանձեապէս չի տարբերում նաև արեւելեան (սատրմ) խմբի լեզուներու: Այս խմբի լեզուներից միայն հին հնդկերէնն է ամբողջականօրէն պահպանուել հնդ. հոլովական համակարգը, այն է տարբերակում է որը հոլով եօթ քերականույթների հակադրութեամբ<sup>15</sup>:

- Հին պատուներէնում բնաւոր (e/o) հոլովման գոյականների բացառականի հոլովածեր անհետացել են, իսկ ակրունների դէպրում եզակի թում նոյնացել է սեռականի, լոգնակի թում՝ տրականի հետ, որ նոյնն է, թէ դարձեալ չի պահպանուել: Բայց եւ այնպէս, հին պատուներէնը պահպանուել է միւս եօթ հոլովածերը:

- Գրեթէ եոյն պատուներն առկա է լիտվերէնում. եթէ բնաւոր գոյականների բացառականն անհետացել է ընդհանրապէս, ապա անբունների բացառականը մէրթ նոյնացել է սեռականի հետ (հմտու, mātris «մօր-մօրից», անէս «ոչխարի-ոչխարից»), մէրթ՝ տրականի հետ (հմտու, avimis «ոչխար-

ների(ս)-ոչխարներից», մերթ էլ՝ անհետացել է, ինչպէս, օրինակ, սառն «որդի» կամ rankà «ձեռք» գոյականների դէպրում<sup>16</sup>:

- Իրանական հին լեզուներից հոլովական ձեւերով հարուստ է յատկապէս աւեստայի լեզուն: Այսպէս, ա եւ ա հիմքերով անունների դէպրում եղակի թում այն տարբերակում է բոլոր ուր հոլովաձեւերը, իսկ յոզնակի թում՝ եօթ. չունի կոչական հոլովի ձեւը: Հին պարսկերենում և հոլովման անունների եղակի սեռականն ու տրականն ունեն նոյն ձեւը, իսկ յոզնակի թում ոչ միայն այդ հոլովների ձեւային տարբերակում չկայ, այլև ջնջուել է բացառականը: Ա հոլովման անունները յոզնակի թում չեն պահպանել կոչական, տրական, բացառական և գործիական հոլովները, այսինքն՝ տարբերակում են միայն չորս հոլովաձեւ անուանական, հայցական, սեռական և ներգոյական<sup>17</sup>:

Ինչպէս արեւելեան, այսպէս էլ արեւմտեան ցեղակիցների հետ հին հայերէնի հոլովական վերջաւորութիւնների գուգաղրական քննութիւնը բացայատում է հետեւեալ պատկերը.

1) Հին հայերէնը չուներ կոչական հոլովի ձեւ, ի տարբերութիւն այնպիսի ցեղակիցների, ինչպիսիք են, օրինակ՝ հին հնդկերէնը, աւեստերէնը, հին յունարէնը, սլավոներէնը, լատիներէնը եւ հին լիտվերէնը, որոնք այդ հոլովաձեւը պահպանել են եզ. ինչպէս բաւար, այսպէս էլ անբուն հոլովական յարացոյցերում (հմմտ. սնսկ. ան. *νγ̄ κα*, կոչ. *νγ̄ κα* «զայլ», հին յուն. ան. *λον κος*, կոչ. *λον κε*, պար. ան. *οτύκε*, կոչ. *οτύче* են. բնաւոր հոլովման դէպրում, սնսկ. ան. *մāτā*, կոչ. *մātar*, հին յուն. ան. *μῆ τηρ*, կոչ. *μῆτερ*՝ անբուն հոլովման դէպրում)<sup>18</sup>. 2) Եզ. գրաբարեան անեւու հյօ. համընկեռում են, իսկ նշուած ցեղակիցներից սնսկ. ունի-*m/-am* (հմմտ. *νγ̄ κα-m/մāτā r-am*), հին յուն. *-on/a* (հմմտ. *λον κ-on/μητέρα*), լատ. *-um/-em* (հմմտ. *Iup-um/մātr-em*) ձեւերը ենն. ենն.: Դրանց համար վերականգնուում են *\*-m/\*-η* նախաձեւերը. պատմահամեմատական հայերէնապիտական ուսումնափրութիւնների համաձայն դէռեւ նախագրաբարեան փուլում հայերէնում անհետացել են հնդ. եզ. ան.ի եւ հյօ.ի վերջաւորութիւնները, որի պատճառով այդ հոլովաձեւերը նոյնացել են<sup>19</sup>. յզն թում զբք. հյօ.ն ուներ *-u (-s)* վերջը նախավեզուի *\*-ns/\*-ns* վերջաւորութիւնների դիմաց, ցեղակիցներից սնսկ. ուներ-*n-s* (*νγ̄ κά-n/մāt̄r-s*), լինով. *-ns/-is*, յուն. *-ονς /ιս/ις*, պար. *-ե<sup>20</sup>/ս*, լատ. *-os/-ōc*, զբք. *-ans* (*wulfans* «զայլեր»)/*-ans* (*brofruns* «(զ)եղբարս»), խեթ. *-uš<sup>21</sup>* (*antuhš-ս՛* «(զ)մարդիկ»)/*hāmant-uš* «ամէն մի») վերջաւորութիւնները: Ինչպէս տեսնում ենք, ձեւերի մեծ մասի հյօ.ի հոլովակերտն իր մէջ ունի *-s/-u* մասնիկը: Պիտի ենթադրել, որ գրաբարում հնդ. յզն. հյօ.ի *\*-ns* վերջաւորութիւնն են պահպանել *-r* վերջն ունեցող ու հիմքով մի բանի բառեր, ինչպէս *բարձր-բարձ-ու*, *(զ)բարձու-նս*, *բաղցր*, *բաղց-ու*, *(զ)բաղցու-նս*, *փորք*, *փոր-ու*, *(զ)փորու-նս*, *ծանր*, *ծան-ու*, *(զ)ծանու-նս*, *մանր*, *ման-ու*,

(զ)մանու-նս, որոնք յօգնակի ձեւերն առհասարակ կազմել են սեռ.-տր. ձեւից<sup>22</sup>. ասուածից հետևում է, որ միև հիմքերով հոլովումներում յզն. հյօ.ի-նն շատ վաղ շրջանում անհետացել է. 3) անուանական հոլովման սեռ.ը և տր.ը ինչպէս եզ., այնպէս էլ յզն. թուերում նոյնն են բոլոր հոլովումներում, բացառութեամբ ո հոլովման պատկանող տարի, տեղի, մի բառերի, որոնցից առաջին երկուսի տր.ը, սպասելի դի փոխարէն, ունի -ջ վերջիամսանիկը, իսկ երրորդի տր.ը -մ (մի-ում).-ջ մասնիկ ունի վերջին սեռ.ը -դին զուգահեռ (մի-ոյ/-ոջ). նախանդեկարովականում սեռ.ը և տր.ը ինընուրոյն հոլովներ են. բնաւոր հիմքերի սեռ.ի համար վերականգնում են \*-os-jo (ըստ ամենային սրանից են ծագում նաև լատ. և *Iup-i* «զայլի» և կելտականների -ն) և \*-e-so(> նաև զոր. -isը *wulf-is*), իսկ անրունների սեռ.ի համար \*-es/\*-os/\*-s վերջաւորութիւնները: Ցեղակիցներից սեռ.ի և տր.ի ձեւերը տարբերակում են, օրինակ, սանսկրիտը, աւեստան, հին յունարէնը, լատիներէնը և պատուներէնը, որոնք եզ. սեռում ունեն հետեւեալ վերջաւորութիւնները. սեսկ. -a-sya ըն., -ur անրուն. վերջինը ոռտացիզմի<sup>23</sup> դրսեւորում է s//r, աւ. -ahē-/ahyā (ըն. ա/ա հոլովումներ), հին յուն. -oio ըն., -os անրուն, լատ. -ī ըն., -is' անրուն, լատ. -a ըն., -e անրուն. հնդ. բնաւոր հիմքով հոլովմանը հայերէնում հետեւում են ո հոլովման պատկանող անունները -ոյ (հսմն. զայլ-ոյ, զետ-ոյ, մարմն-ոյ, ջր-ոյ, սիր-ոյ եւն.), որը յն ծագել է \*shq. այդ յն երկրորդարար տարածուել է նաև ա հիմքով անունների վրայ<sup>24</sup>. յզն. սեռ.ը նախանդեկարովականում ունեցել է \*-om/\*-om վերջաւորութիւնները. առաջինը բնաւորների, իսկ երկրորդը անրունների համար<sup>25</sup>. յզն. զրբ. սեռ., տր. և բցո. ունեն միեւնոյն -ց վերջը, որի ծագման վերաբերեալ եղել են տարբեր կարծիքներ<sup>26</sup>. 4) եթէ եզակիում բցո. ունի ոչ միայն նախորաւոր կազմութիւն, այլև առանձին հոլովական ցուցիչ -է, ապա յօգնակիում սեռ.-տր. հետ նոյնն է ձևով և տարբերում է միայն ի/ի նախորի առկայութեամբ. 5) գրաբարի գործիականի վերջաւորութիւնների առնչութեամբ ընդհանուր առմամբ կարծիքները միանական են. դրանք -p(-p), -i(-p), -u(-p), սերում են հնդ. \*-bhī(-s) վերջաւորութիւններց. գործիականում այս վերջաւորութիւնն ունեն նաև հին հնդ.ը և հին յուն.ը (հմմտ. սեսկ. մատ-*bhi* «մայրերով», *rad-bhi* «ուորերով», յուն. πατρό-φι «հայրերով»<sup>27</sup>). 6) հնդ. ներգոյականի վերջաւորութիւններն են \*-i եզակիում, \*-su յօգնակիում. բնաւոր հիմքերի դէպրում \*-ն ձևուել է ընի \*օ ձայնաւորի հետ. որը սեսկում տուել է -e (որ կ-e «զայլի մէջ»-ըն.) եւ -i (mātar-i «մօր մէջ»- անրուն), հն. պաւում -է (ալուս-է-ըն.) եւ -e (mater-e-անրուն), լիտվ.ում -ė (vilk-ė-ըն.) եւ -ye (móter-y-je-անրուն) եւն., եւն.: Յոգնակի ներգոյականը, որպէս կանոն, կազմուել է եզ. նրգ.ին կամ մէկ այլ թեր հոլովածեալ անհնջինափոխ կամ հնչինափոխուած, աւելացնելով -su (սեսկ. որ կ-e-su, mātar -su ), -xv (հն. լալ. ալևս-է-xv, mater-xv), -se

(լիտ. *vilkuo-sė, móter-y-se*) եւն., եւն. գրաբարում ներգոյականը չի ունեցել յատուկ վերջաւորութիւն(ներ). ներգոյականի իմաստն արտայայտուել է ից) և ախտդիրի յաւելումով եզակիում՝ տր.-ի (ի դասեր, յաղեղան), իսկ յոցնակիում՝ հյօ.-ի (ի դասերս, յաղեղուն) վրայ. ա և ո արտաքին թերման գոյականների եզ. ներգոյականի իմաստն արտայայտում է ի և ախտդիրի յաւելումով եզ. հյօ.-ի ձեւին (ի տիտան, ի գետ)<sup>28</sup>, որովհետեւ սեռ.-տր.-ի ձեւին աւելանալու դեպքում կը նոյնանայ բցո.-ի հետ:

Այսպիսով, ամփոփելով վերջաւարադրեալը՝ կարելի է ասել, որ՝ 1) եզակիի յարացոյցում հնդ. ծագում ունեն գրաբարեան անը., հյօ., սեռ.-տր. եւ գրծ. հոլովների վերջաւորութիւնները, 2) յոցնակիում ապացուցուած է համարում հյօ.-ի և գրծ.-ի վերջաւորութիւնների հնդ. ծագումը, իսկ անը.-քն., ըստ Մէկի՝ «առեղծուածային է. այն բացատրելու նպատակով արուած միակ հաւանական ենթապրութիւնը Պր. Ներկրսրեինն է.....Բայց այդ բացատրութիւնը չի կարելի սոսոյ համարել»<sup>29</sup>, 3) ինչպէս եզ.բցո.-ի-է, այնպէս էլ յգն. սեռ.-տր.-բցո.-ի-ց վերջաւորութիւնների հնդ. բնոյթի և առհասարակ նախաձեկի հարցը մնում է վիճելի:

Վերոյիշեալ փաստերը, եթէ բաւարար չեն -ի ծագումը բացատրելու համար, ապա հիմք են տալիս որոշ եզակացութիւնների համար: Մասնաւրապէս յգն. սեռ.-տր.-բցո.-ի համար միեւնոյն -ց վերջաւորութեան առկայութիւնից համակարգային մօւեցմաք կարելի է ենթառիթե, որ ոչ միայն ո, այլեւ առնուազն ա արտաքին թերման անունների եզակի բռում բցո.-ը նոյնապէս նախապէս ունեցել է նոյն -ց վերջնամասնիկը, ինչ որ սեռ.-տր.-ը, որն աւելացել է հիմքի ձայնաւորին (տիտանայ-ի տիտան-այ, Արշակայ-ի Արշակ-ա-յ, Հերակլեայ-ի Հերակլե-ա-յ, ած-խոյ-յածիս-ո-յ, բուտոյ-ի բուտ-ո-յ, թղթոյ-ի թղթ-ո-յ): Այս օրինաշափութիւնից, ինչպէս արդեւ ասուել է, շեղուում են միայն որոշ գոյականներ (ի տարուցէ, ի տեղուցէ) և մի բռուականը (ի միջոցէ): Նոյնի կարելի է ասել նաև ու արտաքին թերման անունների համար հիմք ընդունելով այն, որ այդ հոլովման պատկանող որոշ բաներ բցո.-ը կազմում են սեռ.-տր.-ի ձեւից աւելացնելով -է մասնիկը (յայգու-է, ի բարձու-է, ի դասու-է, ի զարդու-է, ի խրառու-է, ի նախանձու-է, ի փորու-է), ի տարբերութիւն օրինաշափական անը.-ի ձեւից կազմութեան (ի դաս-է, ի խրաս-է): Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ ու հոլովման անունների բցո.-ը նախապէս ունեցել է «ի+(սեռ.)-տր.» կաղապարը, իսկ -ի աւելացել է աւելի ուշ համարանութեամբ: *Ու* հոլովման դեպքում կարենը է նաև այն իրողութիւնը, որ սեռ.-տր.-ի հետ ձեւով նոյնն է եզ. գրծ.-ը (հմատ. զարդու «զարդու»): Այս հոլովման ենթարկուող անունները վերջում շնունեն, որովհետեւ ունեն մէկ այլ ձայնորդ -է: Այդպիսով, ինչպէս ա և այնպէս էլ ու արտաքին թերման գոյականների եզ. սեռ.-տր.-ը ունենում է երկպարբառակերպ կազմութիւն՝ -այ, -ոյ, -ու (=ու+ո): Դա է պատճառը, որ

ու հոլովման անունների եզ. գրծ.ի -ու վերջն իրենից յետոյ չի ստանում այլ ձայնորդ կամ բաղաձայն, ինչը ստորաբար ստանում են *ա, ո, ի, ի-ա, ո-ա* հոլովմաններին և թարգկուող անունները (հմմտ. *տիտանա-ւ, գետու-ս, սրտի-ւ, աշակերտա-ւ, պատանեա-ւ*): Արդ, ինչպէս կարող էր առաջանալ եզ. բցո.ի -է վերջաւորութիւնը եւ ընդհանրանալ՝ չներառելով միայն *ո* պարզ եւ *ո-ա* խառն հոլովմանները: Հազի՞ թէ կարելի է -Ք նախաձեւ համարել ինդ. բցո.ի (ablativus) \*-օծ վերջաւորութիւնը: Կարծում ենք՝ այդ մասնիկը նաև \*-ե-ւ-օս-ը չէ, ինչպէս որ ենթադրել են Հիւրշմանը եւ Մէյէս: Առաւել հաւանական ենք համարում, որ -էի նախաձեւը ինդ. տր.ի (dativus) \*-ei/\*-oi երկրաբառային վերջաւորութիւններն են (սրանք, բնի ձայնարդի հետ ձուլուելով, տուել են \*-օի), որոնք նախազրաբարեան հայերենի վաղ շրջանում («վաղեցահայերենում»՝ ըստ Զահորկեանի<sup>31)</sup> վերածուել են էի<sup>32</sup>: Հաւանաբար \*-ei(>-է) վերջաւորութիւնը նախ կիրառուել է իբրև անբուն գոյականների բացառական, որովհետեւ եղել է անբունների տրականը, ապա համարանութեամբ տարածուել է նաև բնաւորների վրայ: Յետազայ ընդհանրացումով այն տարածուել է նաև դերանունների վրայ: Ինարկէ, սեռ.ի եւ տր.ի տարարմատութեամբ պայմանաւորուած, այստեղ անկանոնութիւնն աւելի մեծ է: Որ դերանունների բց.ը եւս կազմուել է տր.ի ձեւից, վկայում են, օր., *յինէն(<ին-(Ճ)-է-ն, սեռ. ին), ի քէն(<քէ-զ, սեռ. քո)* եւ յատկապէս *ի նմանէ(<նմա, սեռ. նորա), յորմէ(<որում, սեռ. որոյ), յումերէ(<ումեր, սեռ. ուրուք), յումենսէ(<ումենս, սեռ. ուրումն)* համապատասխանութիւնները: Այս տեսակետի համար լրացուցիչ փաստարկ կարող է համարուել եզ. տր.ում-Չ եւ -ում վերջերով անունների բց.ի կազմութիւնը տր.ի ձեւից (հմմտ. *ի տարուցէ, ի տեղուցէ, յառաջնմէ, ի հետմէ, յաջմէ, ի ձախմէ*)<sup>33</sup>:

Որոշակի դժուարութիւն է ներկայացնում *ի մէջ «մեզանից», ի քէն «քեզանից», ի ձէնց «ձեզանից»* դերանուանական ձեւերի բց.ում -է վերջի բացակայութեան հարցը: Այս ձեւերի առաջացման գործում կարող է դերակատար լինել ինչպէս դրափոխութիւնը, այնպէս էլ աճականի յաւելումը, ինչպէս նաև երկուսը միաժամանակ:

Դիտի ենթադրել, որ նախահնդեւրոպական լեզուից առանձնանալու առաջին շրջանում հայերենը դեռևս պահպանել էր ինչպէս սեռ.ի եւ տր.ի, այսպէս էլ բց.ի միջեւ տարբերութիւնը: Այդ հոլովաճեւերի միջեւ տարբերութիւնները սկսել են ջնջուել հայերենի ինքնուրոյն զարգացման պատմութեան ընթացքում: Սեռ.ը դուրս է մղել տր.ին, իսկ տր.ը՝ բց.ին: Սեռականի եւ տր.ի տարբերութիւնը մնացուկային ձեւով պահպանուել է սակաւաթի անուններում եւ անձնական դերանունների համապատասխան ձեւերում (*ես-ին-ինն, զու-քո-քէզ, ես-նորա-նմա եւն.*), իսկ բց.ի հեագոյն՝ ինդ. վերջաւորութիւնը չի պահպանուել: Այս փոփոխութիւնները, բնականաբար, տեղի են ունեցել երկարատեւ ժամանակի ընթացքում եւ ըստ

ամենային՝ այս նոյն փուլում, եթք հնդ. հոլովական համակարգը վերաձեւում էին նաև միևնույն ցեղակիցները<sup>34</sup>:

Ըստ Էռիթեան, նման տարակարծութիւններ առկայ են նաև յգն.բց. -g վերջառորդեան ծազման հարցի շուրջ: Հայերենագիտութեան մեջ երկար ժամանակ այս հարցում ընդունելի է համարուել Ս. Բուգի տեսակետը, ըստ որի գրք. յգն. սեռ.-տր.-բց.ի -g վերջը ծագել է հնդ. \*-sko- վերջածանցից (եւ ոչ թէ վերջառորդիւնից)<sup>35</sup>: Մէկն ընդունում է այս տեսակետը, սակայն համամիտ չէ, եթք Բուգին այս համեմատում է յուն. -σσοςի հետ: Ըստ Մէկի՝ ընաւոր հիմքերի դէպրում այդ վերջածանցին նախորդել է թիվ ձայնաւորը եւ հոլովական վերջառորդիւնն ստացել է \*-ə-sko-s, \*-u-sko-s, \*-i-sko-s ձեւը, իսկ անբունների դէպրում այդ մասնիկն աւելացել է հիմքին<sup>36</sup>. Եւ իսկապէս էլ \*skn (ինչպէս եւ \*sk, \*ks, \*kh, \*k, \*sŋ) հայերենում տուել է u(s) (հմմտ. \*skel-«կտրել»>ցեղում «ծակել, ճեղբել», -ցեղ «տոնիմ», \*skid-(\*skei-d-) «կտրել, բաժանել»>ցոյիմ «փր մաշկը քերծել», \*skēmo (<\*skeu-) «ծածկել»>ցի «տանիք»): Այս տեսակետը իշխող է եղել մինչեւ խեթերէնի հնդ. բնոյի ապացուցումը Բ. Շոռզու կողմից 1915-17ի ընթացքում, որից յետոյ ինչպէս շատ կարծիքներ, դա եւս վերանայելու անհրաժեշտութիւն զգացուեց: Օրինակ Է. Սոուրտեանսոր հյ. սեռ.-տր.-բց.ի -g վերջը դիտարկեց խեթ. բց. -z(a) վերջառորդիւններու մեջ: Մէկն միեւնույն \*-ske/oից սերուած է համարում նաև առրիսադի (զրաբրեան կատարեալի) -g վերջը (հմմտ. սիրեաց «նա սիրեց»)<sup>39</sup>:

Կարծում ենք՝ հարցը ընտելիս պիտի նկատի ունենալ հետեւեալ հանգամաներները.-

1) Տնչոյթային համընկելումը դեռևս բաւարար չէ, որպէսզի տարբեր թերականական իմաստներ արտայայտող սեռ.-տր.-բց.ի -gին եւ առիստի -gին վերագրուի միեւնույն ծագումը: Մասնաւորապէս, մակրայական \*-ske/oից խոնարհման դաս ցոյց տուող -g ծագումը միանգամայն հնարաւոր է, բայց հաւանական չէ այդ նոյն մասնիկից հոլովման դասի -g ցուցիչի ծագումը: Ճիշտ կը լինի հոլովական -g ծագումնարանութիւնը փևոտել այլ տեղ, որքան էլ որ դրա հիմքերը «մթին» լինեն:

2) Յզն. տր. ու բց. նոյն վերջն ունեն սանսկրիտում՝ ըն. հլ. դէպրում (vṛ̥ke-bhyāḥ-«զայլերի(ն)»/«զայլերից»), բաղաձայնական վերջով (mātri-bhyāḥ-«մայրերի(ն)»/«մայրերից») և -i հիմքով (avi-bhyāḥ-«ոչխարների(ն)»/«ոչխարներից») անբունների դէպրում, հն. պատ. -ā հիմքով անունների դէպրում (հոգա-մ্ব «ոտքերի(ն)»/«ոտքերից»), լատ. ըն. (lup-īs «զայլերի(ն)»/«զայլերից»), բաղաձայնական վերջով (mātri-bus «մայրերի(ն)»/«մայրերից») անբունների դէպրում:

3) Ինչպես հին հնդկերէսի քերականութիւններում, այնպէս էլ համեմատաբանական այլ աշխատանքներում յաճախ սեսկ. իր նշանակուում է տու<sup>40</sup>, որը վկայում է ոչ միայն այդ երկու գրերով նշանակուուղ հնչոյթների հնջիւնական մերձաւորութեան մասին հին հնդկերէնում, այլև՝ սեսկ. իի եւ ցեղակիցների ժի ծագումնաբանական ընդհանրութեան, մի հանգամանք, որ կարեւոր նշանակուութիւն ունի այս հարցի համար:

4) Աւեստայի տր. ու բցո. նոյնապէս սերուում են հնդ. *\*-bhysos*ից, սակայն, ի տարրերութիւն հին հնդկերէնի, կորցրել են վերջին ջը, իսկ շնչեղ ձայնեղ եհը վերածել են պարզ ձայնեղի ե (հմմտ.-տր.-բց). նախորդող ան (տր.) եւ ձն (բց.) բնի բաղադրիչներ են):<sup>41</sup>

5) Ինչպէս *\*-bh-*, այնպէս էլ *\*-m* խմբի հնդ. բարբառների համար նախակուուղ վերականգնուուղ վերջաւորութիւնները յգն. տր. եւ բցո. ունեն նոյն ձևը՝ *\*-bhys/\*-mos*:

6) Յզն. սեռ.ը, մի վարկածի համաձայն, նախապէս ունեցել է *\*-om-s* վերջը և -sի ազդեցութեամբ է *\*-os* վերածուել *\*-ðh-* ըստ այս վարկածի հեղինակների՝ «այդպիսի -sի հետոքը կարելի է տեսնել յնդերէնում սեռական հոլովի յոգնակի թուի -enz-[առ] վերջաւորութեան մէջ», «հմմտ. նաեւ րով. -nzոն որպէս յգն. սեռ. ել. վերջաւորութիւն.... հնարաւոր -nz-ա՛ վերջաւորութեան դէպրում»<sup>42</sup>:

7) «Սեռականի նախական ցուցիչների վերաբաշխմանը մեծապէս օժանդակել են հնդեւրոպական անուանական դասերի երկանդամ համակարգի քայրայումը եւ առանձին անուանական ձևերի անցումը մի դասից միւսին. ինչը յանձեցրել է դիտարկուուղ հնդեւրոպական բարբառներում սեռականի ձևերի կազմաւորման խայտարդիտ պատկերի՝ պայմանաւորած անուանական հիմքերի կառուցուածքային տիպով»<sup>43</sup>:

8) Նախանդեւրոպական լեզուից անջանուած հայկական բարբառ կամ նախահայերէնը հնարաւոր է շուրջ մէկ հազարամետ շփան մէջ է եղել փոքրասիական ցեղախմբերի ու ժողովուրդների, այդ թուում խեթալուվիական ժողովուրդների լեզուների հետ: Որքան է լեզուի քերականական կառուցուածքն աւելի կայուն է, քան, օրինակ հնչոյթայինը, միւսնոյնն է, այն ես ենթակայ է ազդեցութիւնների: Զալոր է բացաւել, որ նախահայերէնի հնդ. նախալեզուից ժառանգած հոլովական համակարգը կարող էր փոփոխուել նաեւ փոքրասիական լեզուների ազդեցութեամբ եւ առանձին դէպքերում յանգել այնպիսի ձևերի, որոնց կապը հնդ. նախաձևերի հետ հասներ անձանաշելիութեան<sup>44</sup>, ինչը մենք տեսնում ենք զր. յգն. սեռ.-տր.-բց.ի-ց վերջաւորութեան դէպքում: Այսուեղ եւս, ինչպէս եղակիում, ինդրի հանգուցալուծմանը կարող են օգնել թերեւս, տիպարանական գուգահեռները: Խեթերէնում տարբեր հիմքերով հոլովումներում գոյականը կամ ածականը յգն. սեռ., տր., նրգ. հոլովներում ունեն միւսնոյն *-as(-as)*, իսկ բցո. *-az* վերջաւորութիւնը

(հմտն. -i հիմք. շալլայ «մեծ»-յզն. տր.-կրգ. *šallaj-ač* «մեծ-աց/մեծ-աւր», -ս-հիմք. genu-«ծուն-զպ/-կր»-յզն. սեռ.-տր.-կրգ. genyu-աչ «ծնկաց /ի ծունզ», ginyu-աչ «ի ծնկաց», -nt- հիմք. խման- «իրարանչիւր, ամէն մի», յզն. սեռ.-տր.-կրգ. խմանած «իրարանչիւրոց/իրարանչիւրս», -r/n- հիմք. pir-«տուն», յզն. տր.-կրգ. parnaš «տանց/ի տունս». խեթերէն-հայերէն առնչութիւններում նկատուել են՝ ա) Տ-2 (խեթ. šallakartāi- «անմտօրէն վարուել», šallakartaհի «անմտօրէն վարուել, բարկացնել»-ի). շաղակ-րաստել «դատարկարասել», խեթ. šeli-«հացահատիկի», ցորենի շեղ»-ի. Հեղջ «հացահատիկի», ցորենի կոյտ», խեթ. išha-, լուվ. սաշի- խեթ. սաշի-«տէր»-ի. իշխան, իշխել են.՝, բ) Տ-ս (հմտն. խեթ. ſagai- «ևախանչան, կան-խանչան», ſakija- «յայտնել, յատարարել»-ի. սակ «պայման, սահմանուած շափ, կոպար, կարգ, դաշն, օրէնք», խեթ. usk- «տեսնել»-ի. սկէմ, այլեւ հսկեմ են.՝)<sup>45</sup>. Ֆրիդրիխի Խեթերէն Լեզուի Համառու Քրականութիւնի մէջ հանդիպում է *halki*-(-i հիմք) «(ցորենի) հաց» օրինակը, որի յզն. հոլովաձեւերից յայտնի են միայն ան. (*halkeš* և ից. (*halkius*) ձեւերը, իսկ եզ. սեռ. ունի *halkijaš* ձեւը. նկատի ունենալով, որ այս հոլովման պատկանող *halhaltumari-* «անկիւնաքար» բառի յզն. սեռ.-կրգ. եւս ունի -aչ վերջը *halhaltumarij-ač* «անկիւնաքարանց/ յանկիւնաքարս»<sup>46</sup>, ապա կարծիք է ենթադրել նաև յզն. սեռ.-տրի \**halkijas* ձեւ ի. հացիցի դիմաց, այսինքն՝ խեթ. -š-ի. -g համապատասխանութիւն: Ասուածը, իհարկէ, չի նշանակում, թէ իին հայերէնի յզն. սեռ.-տր.-բցո.ի -g վերջը խեթ. -šի համարժեքն է, բայց ենթադրում է, որ այդ վերջաւորութիւնը կարող էր առաջանալ նաև խեթ. ֆի համարանութեամբ:

Հին հայերէնի բացառականի մասին մեր պատկերացումն ամբող-ջացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ նաև ի նախ-որին, որի ծագումնաբանութեան հարցը եւս հայերէնազիտութեան մէջ տարակարծութիւններ է առաջացրել: Այսպէս. 1) Պեղերսնը մերժել է բցո. ի նախորդի վերաբերեալ Մէջէի տեսակետը, ըստ որի այն նոյնն է վլատուերէնի ստ (*\*eks*)ի հետ: Նա ի նախորդը դիտարկում է հնդ. \*en = հն. ևն, լո. in, գրն. in համարժեքների հետ զուգահեռ մէջ: Հայերէնում -v ռնգայինին նախորդող դիրքում տեղի է ունեցել e>ի անցում (հմտն. \*penk“e>հինգ, \*senos>հին), այնուհետեւ նև ընկել էիս: \*En>իի նշանակութիւնն է «մէջ», որը յատկ արտայայտում է ներգոյականում: 2) Նկատի ունենալով բցո. իի և նրգ. իի իմաստային տարբերութիւնը Աճառեանը հակուած է ընդունելու Մէջէի տեսակետը, մասնաւրապէս ի. բցո. ին դիտելու իրրել լատ. Փի զուգահեռով<sup>47</sup>:

Իսկապէս էլ կիրառական նշանակութիւնը հիմք ընդունելու դեպքում զրբ. բցո. ին պիտի համարել լատ. e, exի համարժեքը, որովհետեւ եթէ ablativush հետ զործածուող inը պատասխանում է որտեղ դ հարցին, այսինքն՝ նրգ.ի, ապա ևն համարժեք է բցո. -ից վերջաւորութեանը (ու. ստ

նախդրին), այսինքն՝ իր խնդրի հետ կը պատաժանի որտեղից հարցին: Բայց արդիօք այդքանը բաւարար է ասելու համար, թէ զքր. բցո. Ան եւ ներգ. -ին տարբեր ծագում ունեն, այն դեպքում, եթք նախդրաւոր կառուցուածք չեն ունեցել ոչ նախահեղերոպականի եւ ոչ էլ օրինակ են. հեղկ.ի. են. յուն.ի կամ խեր.ի հոլովաձեւերը (այդ թում՝ բցո.ը), որոնց ձեւերն ամենից մօտն են համարում ենդ. Լեզուակառուցուածքին: Ոչ պակաս կարեւոր է այն հանգամանքը, որ, օրինակ, ոչ թէ լատ. ablativus է նախդրաւոր, այլ նախդրները գործածուելով աblativusի հետ, նրան հաղորդում են տարբեր նշանակութիւններ բցո.ի, գրծ.ի, նրգ.ի, այնպէս, ինչպէս զ նախդիրը, ըստ իին քերականների, բցո.ի հետ կիրառուելով նրան հաղորդում էր պատմական հոլովի նշանակութիւն (հմմտ. պատմել զնոցանէ «երա մասին» կամ «երանից»), իսկ գրծ.ի հետ կիրառուելով պարագական հոլովի նշանակութիւն (հմմտ. զբաղարս «քաղաքի շուրջը»): Ի տարբերութիւն զրաբարի բցո.ի կամ երգ.ի, որոնք պարզապէս հնարաւոր չեն առանց համապատասխան նախդրի (հմմտ. զբոյ, պատմանոյ ձեւերը, առանց ի նախդրի, արտայատում են եզ. սեռ.-տր.ի իմաստ, հմպտու. «զրի/(ն)», «պատմանու/(ն)», իսկ ի նախդրով՝ եզ. բցո.ի («զրից», «պատմանոց»), նոյն կերպ ի գետոյ և ի գետոս յզն. բցո. և նրգ. են, իսկ առանց նախդրի հմպտու. եզ. սեռ.-տր. և յզն. հյց.- լատ. ablativusը գործածական է առանց որեւէ նախդրի (հմմտ. agr-օ «դաշտ-ից/-ու/-ում», vir-օ «տղամարդ-ուց/-ով/-ու մէջ», leg-է «օրէնք-ից/-ով/-ում»): Ասուածից կարելի է եղրակացնել, որ նախդրաւոր բցո.ը զուտ հայերէնեան կազմութիւն է, որի ին աւելի հայանական է, որ համարանութեամբ անցած լինի ներգոյականից. Այսպիսի բացատրութեան համար մենք տեսնում ենք երկու հիմք. ա) ի տաեւ, ի ծովէ, յաշակերտէ, յԱրշակէ եւ նման ձեւերի նախնական ըմբռնումը, ըստ ամենային, եղել է «տան միջից», «ծովի միջից», «աշակերտի միջից», «Արշակի միջից», այսինքն՝ համատեղել է նրգ.ին ընորոշ «մի բանի մէջ, ներսում» և բցո.ի «նրանից դուրս գալու, անշատուելու» իմաստները. ըստ եւրեկան նոյն բանը նկատի ունի Պեղերանը վկայակոչելով դասիերէնի օրինակը. հմմտ. fra inde i byen (կամ fra i byen) «քաղաքի մէջէ»<sup>48</sup>, բ) ո պարզ եւ ո-ա խառն հոլովման բցո. ձեւերում ի նախդրի գործածութիւնը սեռ.-տր.ի ձեւերի հետ շփոթը կանխելու ակնտևափելի միջոց էր:

Ամփոփելով վերոշարադրեալը՝ կարելի է ասել, որ իին հայերէնի 1) եզակի բացառականի -է վերջաւորութիւնը սերում է ենդ. տրականի \*(-οι>)ει երկարքառային վերջաւորութիւններից, որոնք նախազրաբարեան վաղ շրջանում վերածուել են -իք, 2) յոգնակի բացառականի -ց վերջաւորութիւնը, նոյնը լինելով սեռական-տրականի հետ, ենթադրաբար զարգացել է խեթերէնի յոգնակի սեռական-տրական (-բացառականի) -չ վերջաւորութեան համարանութեամբ, 3) բացառականի նախդրաւոր

կազմութիւնը հայերէնին բնորոշ իրողութիւն է, որն առաջացել է բացառականը (նաև ներգոյականը) սեռական-տրականից (հմպտու անուանական-հայցականից) ձեւով տարբերակելու համար:

## ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Սա Անուուան Մէյէի գրքի 7րդ, և իր կենաւութեան լոյս տեսած վերջին հրատարակութիւնն է, որից կ'կատարուել է 1938ի ոռուելու քազմանութիւնը:
- <sup>2</sup> Ինքատիալ վարկածներից մէկի հեղինակն է 1950ականների կեսի խոլացի նշանաւոր լեզուաբան, Նեղինզորիստիկական դպրոցի ներկայացուցիչ Դիզանին, ըստ որի՝ հայերէնի յոգևակիի թև բերել են «հիւսիսից եկած» նուաճողները, որպիսիք նաև համարում է փոխազնիներին (Վիտուորէ Պիզանի, «Հնիելուական Լեզուների Ծագումը», Պատմաբանասիրական Հանդես, 1979, թիւ 1, էջ 210):
- <sup>3</sup> Անտ. Մէյէ, Հայագիտական Ուսումնասիրութիւններ, Երեւան, ԵՀՀ, 1978, էջ 399:
- <sup>4</sup> Հայերիի Հիւրցման, Հայագիտական Ուսումնասիրութիւններ, Երեւան, ԵՀՀ, 2004, էջ 256:
- <sup>5</sup> Հոլգեր Պեղերսը, Նպաստ Մը Հայ Լեզուի Պատմութեան, Վիեննա, Ախիթքարեան Տպարան, 1904, էջ 41:
- <sup>6</sup> Նոյն, էջ 42:
- <sup>7</sup> Տեղի եւ տարի գոյականների բացառականն ունեցել է նաև -ո հիմքով բառերի համար ստվրական ի տեղոյ «սեղից» եւ ի տարոյ «տարուց» ձեւերը, որոնք սակայն, թիշ գործածական են եղել (Ա. Ա. Աբրահամեան, Գրաբարի Զեռնարկ, Երեւան, «Լոյս», 1976, էջ 51):
- <sup>8</sup> Նոյն:
- <sup>9</sup> Հրաշեայ Աճատեան, Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի. Հոր. 3, Երեւան, ՀՍՍՀ ԳԱԱ, 1957, էջ 431. նաև Գեղոր Զահոնէեան, Հին Հայերէնի Հոլովման Միստէւր Եւ Նրա Ծագումը, Երեւան, ԵՀՀ, 1959, էջ 218:
- <sup>10</sup> P. Shantren, *Istoricheskaya Morfologiya Grecheskogo Yazika* (Յունարէն լեզուի պատմական ձեւաբանութիւն), III, Սոսկուա, 1953, էջ 13-15:
- <sup>11</sup> A. Ерսу, *Istoricheskaya Morfologiya Latinskogo Yazika* (Լատինստերէն լեզուի պատմական ձեւաբանութիւն), III, Սոսկուա, 1950, էջ 20:
- <sup>12</sup> J. Fridrikh, *Kratkaya Grammatika Khetskogo Yazika* (Համառու պատմութիւն իշերական լեզուի), III, Սոսկուա, 1952, էջ 57-58. Խաչ.՝ A. A. Korolyov, "Khetto-Luwiiyskie Yazyki", *Yaziki Azii I Afriki* (Խեթա-լուվիլական լեզուներ, Սահին և Աֆրիկայի լեզուները), T. I, Nauka, Սոսկուա, 1976, էջ 19:
- <sup>13</sup> M. M. Gukhman, *Gotskiy Yazyk*, ILIYA, Սոսկուա, 1958, էջ 72:
- <sup>14</sup> H. Lewis, H. Pedersen, *Kratkaya Srawnitelnaya Grammatika Keltskikh Yazikov* (Խեթական լեզուների համառու համեմատական քերականութիւն), III, Սոսկուա, 1954, էջ 204:
- <sup>15</sup> W. W. Iwanow, W. N. Toporow, *Sanskrit*, Nauka, Սոսկուա, 1960, էջ 76-91. Խաչ.՝ T. Ya. Elizarenkowa, "Sanskrit", *Yaziki Mira (Indoariyskie Yaziki Drewnego I Srednego Periodov)* (Աշխարհի լեզուները, իին եւ միջին շրջանի հնդարիական լեզուները), Academia, Սոսկուա, 2004, էջ 39-41:

- <sup>16</sup> M. N. Peterson, *Ocherk Litowskogo Yazika* (Ավեարկ լիտուական լեզուի մասին), Սովորություն, 1955, էջ 36-45:
- <sup>17</sup> W. S. Rastorguewa, "Drewneiranskie Yaziki" (Հին իրանական լեզուները), *Yaziki Azii I Afriki, T. II*, Nauka, Սովորություն, 1978, էջ 30-31:
- <sup>18</sup> Լատիներէնում, պատներէնում և լիտուերէնում անբուների ուղղականն ու կոչականն ձևով չեն տարբերում:
- <sup>19</sup> A. Meillet, *Esquisse d'une Grammaire Comparée de l'Arménien Classique*, Վիեննա, Միխրաբեան Տպարան, 1936, էջ 64. Խաչի Աճառեան, *Լիակատար, Հոդ. 3*, էջ 428. Խաչի Զահուկեան, Հին Հայերէնի Հոդովման..., էջ 212-213. Խաչի G.B. Djahukian, *Srawnitelnaya Grammatika Armyanskogo Yazika*, (Հայերէն լեզուի համեմատական բերականութիւն) Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 137: Այս գրքում Զահուկեանը նկատում է, սակայն, որ «....այդ որոշքն ուղղակի իմաստով պիտի հասկանալ միայն ճայինորական հիմքերի մեծ մասի համար: Մեացեալ դէպէրում վերջանորութեան գործառոյթի ամրողութեամբ կամ մասնակիօրէն իր վրայ է վերջում հերթազայութիւնը, կամ էլ հիմքի վերջնային բաղադրիչ-ներից որեւէ մէկը հանդէս է գալիս որպէս բուն վերջանորութիւն» (նոյն):
- <sup>20</sup> Բաց վանկի օրէնքի համաձայն պատներէնում հյօն վերջանորութեան -ն ընկել է, «իսկ ոռ կապակցութիւնը, յայտնուելով բարավերջում, օրինաչափորէն տուել է եւ» (A. N. Sawchenko, *Srawnitelnaya Grammatika Indoевропейских Языков* (Նորէնորապական լեզուների համեմատական բերականութիւն), Սովորություն, «Վայսայ շկոլա», 1974, էջ 196):
- <sup>21</sup> Խեթերէնում -ամ վերջի առաջարկում է Ֆրիդրիխը (J. Fridrikh, *Kratkaya Grammatika Khetskogo Yazika* (Խեթերէն լեզուի համառու պատմութիւն), III, Սովորություն, 1952, էջ 59): Խոյ, Ա. Ն. Սաւչենկօն և Ա. Ա. Կորոլյովը առաջարկում են -ս վերջը (Sawchenko, էջ 196 և Korolyov, էջ 19): Այս երեսությունը խեթական բերազրէրի տարբերեցման արդինք է, որովհետեւ դրանք տարբերակիչ նշաններ չունեն և ի համար երկու հետոյին է առաջարկում են միեւնոն ծ զով (Գ. Ա. Ղափանցեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն*. Հին Երջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1961, էջ 161):
- <sup>22</sup> Այդ խմբին պատկանող որոշ բառերի յգն սովորական չեն կամ էլ անկանոնութիւն է դրսւորում (հմտ. ասր (=բուրդ), բանձր, ծաղր, կարծր, մեղք):
- <sup>23</sup> Ռուսացիզի շիմական բաղաձայնի (սովորաբար ժի կամ իի) անցումն է ժի:
- <sup>24</sup> Djahukian, էջ 138:
- <sup>25</sup> Մէջէն առաջարկել է \*-օն և \*-օն և անխաման է դրսւորությունը, երկրորդը, օր. յուն. -ան (κυν-ան «շների») վերջանորութեան համար (A. Meye, *Vvedenie V Srawnitelnoe Izuchenie Indoевропейских Языков* (Նորէնորապական լեզուների համեմատական ուսումնափրութեան ներածութիւն), GSEU, Սովորություն, 1938, էջ 305): Ըստ եւրեկան, Մէջէն տեսութեանն է հետևել Զահուկեանն իր գիտական գործունեութեան վաղ շրջանում (Զահուկեան, Հին Հայերէնի Հոդովման..., էջ 223):
- <sup>26</sup> Նոյն Խաչի Djahukian, էջեր 139, 224:
- <sup>27</sup> Հին յունարէնի օրինակն ըստ Օդրի (J. Odri, *Indoevropeyskiy Yazik: Novoe V Zarubejnoy Lingvistike* (Նորէնորապական լեզուներութիւն արտասահմանեան լեզուարանութեան մեջ), Vip. 21, Սովորություն, Փրոլիք, 1988, էջ 50): -օւ(ν) վերջը

գրծի հևազյն ձեւն է եւ հազուաշխա հանդիպում է Հոմերոսի երկերում: Ցունարքնի բարբառներում առաւել տարածուած տարբերակն է -օն, որը միաժամանակ ունի տրդի և բցուի իմաստ: Հար. «զործիական հոլովի վերջաւորութիւնների մասին հարցը,- լուս Մէկի, որոշակի դժուարութիւն է ներկայացնում եւ,- բաց է մտում» (Meillet, *Vvedenie*, էջ 304): Գրծի վերջաւորութիւնների բազմազանութիւնը ցեղակից լեզուներում լուրջ խոչընդուն է միասնական նախաձեփի վերականգնման համար (Sawchenko, էջ 204): Տարբերակում է \*-ենով գրծի երկու ճիւզաւորում՝ -bhi, որը, հին հնդ, հին յուն. եւ զրբ. բացի, ունեն նաև հին պրով. եւ աւեսու. (-bīš, հնմոն. ալ, bāzu-bīš «Ճեռքերով») եւ -bho, որն ունեն զալ. (-bo), մեսապ. (-ba-s) եւ լատ. (-bus.- mātribus «մայրեր-ին/-ից/-ու»):

<sup>28</sup> Զահոնկեանը զրբ. յգն. ներգոյականի -ս վեցը «աթեմատիկ բառաձայնարդայանց հիմքերի դեպում» սերուած է համարում հնդ. \*-shg, որը համարանութեամբ տարածուել է նաև բնաւորների վրայ, ուստի և նրան վերապրում է հյօ-սից տարբեր ծագում (Զահոնկեան, Հին Հայերէնի Շոյրվման, էջ 222-223): Ըստ Երեւոյթին, այս տեսակիտը նա յետազայն վերասայել է որովհետեւ իր *Savitelnaya Grammatikam* (Համեմատական թերականութիւն) ներգոյական հոլով չի տարբերակում:

Ներգոյականի առնցութեամբ ուշագրա է Բենուենիսասի դիրքորոշումը: Նա մերժել է ներգոյականի որպէս ինքնուրոյն հոլովի դրութիւնը նախահնդերուպականում այն համարելով անուանական-հայցականի դրսեւորումներից մէկը եւ նրան տալով «անորոշ հոլով» անուանուածը. Վերջինը «հնդերուպական լեզուում ունեցել է չեզոք սեղի հիմքի հետ համբնելող ձեւ» (E. Benvenist, *Indoeuropejskoe Imennoe Slovoobrazovanie* (Հնդերուպական անուանական բառակազմութիւն), III, Առողջուա, 1955, էջ 128): Այս խնդրին չենք անդրադառնում, որովհետեւ մեր հարցի տեսանկիւնից սկզբունքային նշանակութիւն չունի:

<sup>29</sup> Մէջ, էջ 400:

<sup>30</sup> Մեր համոզմամբ զրաբարում ուն պարզ ձայնաւոր չէր, այլ՝ երկբարբառակերպ: Այդ հարցին մենք անդրադաբել ենք «Երկբարբառային եւ Եռաբարբառային Կազմութիւնները Գրաբարում» առայժմ անտիպ յօդուածում (տպագրութեան է ընդունել Բազմավկառում):

<sup>31</sup> Գ. Բ. Զահոնկեան, Հայոց Լեզուի Պատմութիւն. Նախազրային Ժամանակաշրջան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1987:

<sup>32</sup> Հայերէնի Հիւրշման, «Հայերէնի Դիրքը Հնդերուպական Լեզուների Շրջանակներում», Հայագիտական Ուսումնասիրութիւններ, Երեւան, ԵՀՀ, 2004, էջ 40, 224-225. նաև Meillet, *Esquisse....*, էջ 44. նաև՝ Հոլգեր Պեղերսը, Հայերէն եւ Հրացի Լեզուները, Վիեննա, Միխիթաեան Տպ., 1907, էջ 106. նաև Հ. Աճառեան, Հիակատար Թերականութիւն Հայոց Լեզուի, Հար. 6, Երեւան, 1971, էջ 514. նաև Է. Բ. Աղայեան, Գրաբարի Թերականութիւն, Հար. 1, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1964, էջ 134-136. նաև Djahukian, էջ 27:

<sup>33</sup> Պեղերսը այս շարքին է դասում նաև ի տուրքենէ (սեռ.-տր. տուրքենան) ձեւը (Պեղերս, Նպաստ մը..., էջ 37):

<sup>34</sup> Sawchenko, էջ 170-71: Զայած որ դասական հնդերուպաբանութեան համաձայն ինը հնդերէնի հոլովական համակարգն ամենից լաւ է պահպանել նախալիզ-

ոի ձեւերը, բայց և այսպէս, այն եւս որոշ փոփոխութիւններ կրել է: Այսպէս, Բարոնուն սահմարդիտում «անկանոնութիւն» է համարում այն, որ եզակիում ըստ նոյն է սեռ, հետ, իսկ յովակիում՝ տր.ի (Burrow, Sanskrit, III, 1976, էջ 225):

<sup>35</sup> Զահոնկիսն, Հիե Հայերէնի Հոլովման, էջ 223:

<sup>36</sup> Meillet, Esquisse...., էջ 72:

<sup>37</sup> Զահոնկիսն, Հիե Հայերէնի Հոլովման, ծնք.2:

<sup>38</sup> Djahukian, էջ 139:

<sup>39</sup> Meye, Vvedenie, էջ 235-236:

<sup>40</sup> Elizarenko, նոյն. Խաւ. Burrow, նոյն. Խաւ. O. Semereni, Vvedenie V Sravnitelnoe Yazikoznanie (Համեմատական լեզուաբանութեան ներածութիւն), Սոսկուա, Փրոլիետ, 1980, էջ 167-215:

<sup>41</sup> Rastorguewa, նոյն:

<sup>42</sup> Th. V. Gamkrelidze, Vyach. Vs. Ivanov, Indoevropeyskiy Yazik I Indoewropeytsi (Հնդեւրոպական լեզուն և հնդեւրոպացիներ), V. 1, Թբիլիսի, ITU, 1984, էջ 268-269:

<sup>43</sup> Նոյն, էջ 270:

<sup>44</sup> «Մեռական-տրական-բացառական -ց բնորոշ զիծը ընդհանուր ոչիչ չունեցական միւս լեզուների նոյն հոլովների որեւէ մէկի ձեւերի հետ» (Մէջ, էջ 400):

<sup>45</sup>Գ. Բ. Զահոնկիսն, Հայերէնը Եւ Հնդեւրոպական Հիե Լեզուները, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1970, էջ 151-156:

<sup>46</sup> Fridrikh, էջ 61:

<sup>47</sup> Աճանտան, Լիակատարք Քերականութիւն...., Հայր. 5, 1965, էջ 80-81:

<sup>48</sup> Պեղերըն, էջ 43:

## THE ORIGIN OF ABLATIVE CASE ENDINGS IN OLD ARMENIAN (SUMMARY)

VARTAN PETROSSIAN  
d.hovhannisyan@president.am

Among *Krapar* (ancient Armenian) case endings only the origin of the declination endings of the Instrumental Case singular -p, -t, -l (-b, -v, -u) and the Accusative Case plural -u (-s) were not controversial: the prototype of the first is considered to be the Indo-European \*-bhi, and for the second \*-ns. Alongside the other case declination endings, the origin of the Ablative Case singular -t (-e) and the Ablative Case plural -g (-ts) gave rise to dispute.

The author analyses this phenomenon through a typological comparison of a number of Indo-European languages and uses a systematic approach to argue that: a) the prototype of the Ablative Case declination ending -t (-e) is the Indo-European diphthong endings \*(-oi>)-ei of the Dative Case, b) the -g (-ts) declination ending of the Ablative Case plural has developed from the Hittite plural forms in analogy with the Genitive-Dative (Ablative) Case -š ending, c) the prefix (with ի- (i-)) formation of the Ablative Case emerged during the independent development of the Armenian language in the phase of *Krapar* to differentiate it through its form from the Genitive-Dative.